Ե. Իկոնիոնի Սուլտանք եւ Լեւոն. Առումն Պռականայ եւ Լուլուայ.

Թերեւս որիշ է յայսմանէ եւ յետոյ ուրեմն՝ պատմածն Կիրակոսի, ’ի ժամանակի ոչ այլազգեացն զատկի, այլ մերձ ’ի քրիստոսական Զատկի աւուրս. եւ հաւանօրէն սուլտանն Իկոնիոնի կամ զօրավար մի նորին էր (զոր նա սուլտան Հալպայ ասէ). եւ զի նա միայն մանր ինչ հանգամանօք պատմէ զդէպսն, տեղի տացուք բանիցն. «Զօրաժողով եղեւ ’ի վերայ նորա (Լեւոնի), յաւուրս զատկաց. եւ յղեաց առ Լեւոն պատգամս, այսպէս. Եթէ ոչ հարկեսցես ինձ ծառայութեամբ, բազմութեամբ զօրաց իմոց ’ի սուր սուսերի մաշեցից զամենայն բնակիչս երկրի քո, մայր առ մանկամբ. եւ զտօնդ ձեր՝ յորում ուրախանայք քրիստոնեայք՝ պատուելով զդա, որպէս թէ յարութիւն Քրիստոսին ձերոյ իցէ, դարձուցից զդա ’ի սուգ ձեզ, եւ արարից զի զպատրաստեալ կերակուրն ձեր վասն տօնիդ՝ ուտիցէք զայդ ’ի վերայ ձիոց: Եւ իբրեւ առաքեաց զայս, ինքն առեալ զբազմութիւն զօրաց իւրոց բանակեցաւ առ սահմանօք նորա. եւ մնայր գալստեան պատգամին: Իբրեւ գիտաց արքայ Լեւոն զգալ պատգամին եւ զօրաժողով լինել այլազգեաց, հրամայեաց զդեսպանսն յայլ կողմն շրջեցուցանել աշխարհին, պատճառանօք թէ այդր իցէ արքայն. եւ ինքն աճապարեալ ժողովեաց զզօրս իւր, եւ ընդ այլ կողմն ել ’ի վերայ նոցա, եւ յեղակարծ ժամու անկան ’ի վերայ նոցա. եհար զնոսա հարուածս մեծամեծս: Մազապուր փախեաւ սուլտանն. եւ Լեւոնի արքայի առեալ զաւար բանակին այլազգեաց՝ հանդերձ վրանօք նոցա, եւ զգերիսն ամենայն, եկն բանակեցաւ յաշխարհին իւրում առ ափն գետոյն. եւ հրամայեաց զօրաց իւրոց կանգնել զխորանս այլազգեաց, եւ զիւրաքանչիւր զդրօշս կանգնել ’ի դուռն խորանին իւրոյ. եւ հրամայեաց կոչել զդեսպանսն, եւ իբրեւ եկին՝ տեսին զխորանս եւ զվրանս զօրաց իւրեանց եւ նշանակ դրօշից իւրաքանչիւր գնդից, եւ զարմացան հիացմամբ մեծաւ, զի ոչ գիտէին զեղեալսն. ապա իբրեւ իմացան՝ դիմեցին յոտս թագաւորին, եւ զապրիլ անձանց խնդրէին: Իսկ արքայն մարդասիրեալ առ նոսա՝ շնորհեաց նոցա զկեանս, առաքելով զնոսա առ տէրն իւրեանց. եւ զայն հարկն՝ զոր պահանջէր սուլտանն յարքայէն, զնոյն եւ եւս յաւելեալ եդ ’ի վերայ նորա, եւ ծառայեցոյց զայլազգիսն»: Միաբան այսմ վկայեն եւ այլ պատմիչք մեր, եթէ հանգոյն եղբօր իւրոյ Ռուբինի՝ որ

Էած ’ի մայր իւր քաղաքին,
Որ է Սիսուան անմատչելին»: